




Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը լայն է առաւօտեան 10—2 ժամ
(քաղի կիրակի եւ առիթներին).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւզով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 21-ին

Հարգանքներ են, որ տեղի են ունենում,
պատկառութիւններ են, որ կատարվում են, շատ
յաճախ նոյն գիշերվայ ընթացքում, մի եւ նոյն
եկեղեցում մի քանի անգամ Պատկառութե-
անքներ են եկեղեցի են գրաւում փողոցի անց-
ուղարձ անողների անգամ բազմութիւն. ով
հասնում է, մտնում է: Այդ, ի հարկէ, ոչինչ. բայց
նրանք իրանց անքան ազատ են գրում, այն-
պէս են պահում իրանց այդտեղ, որ կարծես
փողոցում լինեն...

Երկու օր առաջ, երկուշաբթի 11 ժամին,
հարգանքներ են հետ եկեղեցի եւ մտնում
եւ եւ: Եկեղեցու մուտքը խաւար է. խաւար-
խաւարով, ոտներս չեմքրին դարկելով, մըտ-
նում ենք եկեղեցին. այդտեղ նոյնպէս մուլն
է, սակայն լի է մարդկանցով. դէս ու դէս,
սիւնների շուրջը եւ անկիւններում, լսելի են
փափոցներ, հոնոց եւ սրախօտութիւններ...
Հետեւ, սեղանի առաջ, տեսնվում է աղօտ լոյս.
մի քանի մոտեր միայն հազիւ հազ նշմարելի են
դարձնում կատարվող պատկառութեան հան-
դէսը: Պատկառութիւն է արհեստաւոր մի աղայ: Մի
պատկառութիւնը դեռ չը կատարած՝ եկել է
եւ երկրորդ զոյգը, հերթի է սպասում: Այդ ե-
րկուշաբթի պիտի գային եւ մի քանի ուրիշ
զոյգեր, ինչպէս ասում էր ծխաւոր քահանայն.
Եւ չը նայած այդ բոլորին խաւարը թաղաւ-
րում էր:

—Ինչո՞ւ մուլ է այսպէս, մոմեր ինչո՞ւ
չէք վառում,—գնահատան կողմից հարցրեւ են
ուղղվում ժամկոյններին, որոնք իրաւանց-
ման մէջ են երեւում եւ միակ պատասխանա-
տու՝ մարմին հանդիսանում...

—Պէտք է հրամայեն, որ վառենք,—պա-
տասխանում են եկեղեցու պատասխանատու:
սպասուողները:

—Վառեցէ՛ք ուրեմն:

—Այդպէս չէ կարելի, պատասխանում են
նրանք.—պէտք է պայմանաւորվի, պէտք է
իմանալ, թէ որ ջահն էք կամենում, որ վա-
ռենք: Մէջ տեղի ջահը որ վառենք, կարծե-
նայ 15 ռուբլի, աշակողման ջահը՝ 8 ռուբլի,
ձախակողմանը՝ 6 ռ., սեղանի առաջ երկու թէ
երեք մոմը՝ 3 ռ.:—Պատկառութեան յատուկ
առողջանութեամբ յայտարարված սակագները
իմանալուց յետոյ միայն հասկանալի եղաւ, թէ
ինչու պատկառ արհեստաւորի պատկառութե-
ան հանդէսը խաւարի մէջ էր կատարվում,
նա չէ կամեցել, ոչ, ոչ թէ չէ կամեցել, այլ չէ
կարողացել տամենակ րո: Բլինի տալ եկեղե-
ցին լուսաւորելու համար...

Ուրեմն—այդպէս էլ պէտք է լինի. ով որ
ուներ է, նա միայն պիտի լուսաւորված եկե-
ղեցում պատկառ, իսկ չունենողը միութեան,
խաւարի պիտի մտնել, այն աստիճան պիտի
միջնեցնել եկեղեցին, որ հարկադրված լինեն
ջահին վառել տալ կամ միմեանց չը տես-
նել...

Հասկանալի է, երբ ունենողներից յօգուտ ե-
կեղեցու պահանջներ են անվում. միթէ նոյն
պահանջները կարելի է ուղղել եւ չունենողնե-
րին: Չահիր թող չը վառեն, փոյթ չէ, թող
այդ ջահերը եկամտաւոր հարուստ աղբիւրներ
հանդիսանան հարուստների նկատմամբ, բայց
եկեղեցին գիտութեամբ խաւարեցնել, որպէս
զի պատկառվողը կամայ ակամայ ջահը վա-
ռել տալ, այդ, չունենողների վերաբերմամբ
գոնէ, ներքի չէ: Եկեղեցու ջահերը պէտք է
պաշտպանել, բայց մոռանալ ժողովրդի, ճիշտ-
գանի եկեղեցուն, շահերը, եկեղեցին դարձնել
սակարկատուն, վաճառատեղի, հարստահարու-
թեան վայր, այդ կը նշանակէ եկեղեցու իսկա-
կան նշանակութիւնը չը հասկանալ...

Աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ ու-
ղարկութիւն դարձնվէր այն անկարգութիւննե-
րի վրա, որոնք տեղի են ունենում պատկա-
ռութիւնների ժամանակ ժամկոյնների, տիրա-
պետների կողմից, որոնք, առանց քայլելու, նո-
րապակներն առ ջը կտրում, կանգնում են,

Տ. Ե.

զգուշութիւնները, որ տեղի չունենան
սխալներ: Իսկ մի եւ նոյն ժամանակ լուծված
կը լինի գործնական կեանքի կենսական
հարցերից մէկը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Տրանսպարտ դեռ ոտքի վրա է, դեռ հերոս,
լցված իր ազատութեան համար կռուելու անհուն
քաջութեամբ: Բորսայականների, տաք ու հան-
գիստ անկենդանութեամբ ապրելու սերահարներ,
հաշիւ եւ կոմպրոմիսների մարդկանց համար
բոլորները անխելքներ են. ինչպէս է, որ նը-
րանք մի կերպ չեն յարմարվում, ինչպէս է, որ
ապրելու քաջութիւնը չեն զգում: Բաւական
է որքան կռուցին. տեսնում են որ բան չէ
զուրա գալիս, տեսնում են որ օգնող չը կայ,
իսկ դիմացի թշնամին Անգլիան է, աշխարհի
տէրը, ուրեմն պիտի բաւական համարեն իրանց
ցոյց տուած քաջութիւնը եւ հանդարտվեն:
Այսպէս են դատում. բայց Տրանսպարտ շարու-
նակում է անհաւատար կոխը մի տոկոսնու-
թեամբ, որ ապագանը կարող է: Հարաւային
Աֆրիկայի երկրներ տակ առա տարի ու կէս է,
կատարվում է մի գործ, որ շատ հազիւ է
կրկնվում մարդկային պատմութեան մէջ, մի
գործ, որ հենց այդ պատճառով էլ պատմու-
թեան ամենատիրուն զարդերից մէկն է կազ-
մում: Բօքսերը կուռում են, հերոսական դափ-
ները քաղում. իսկ մեծ, լուսաւոր, առաջա-
դէմ Անգլիան կուռում է, իրան աւելի եւ աւելի
խայտաբախելու համար: «РУССІЯ ВЪД.» լրա-
գրի Լոնդոնի թղթակիցը բերում է քաղուածք-
ներ անգլիական լրագրից, որոնք ցոյց են
տալիս, թէ ինչ կերպարանք է ընդունել այժմ
պատերազմը Հարաւային Աֆրիկայում:

Ան ինչպէս են նկարագրում Անգլանց
բանակը, ուր յաղթող անգլիացիները ուղար-
կում են բուրգերների կանանց եւ երեխա-
ներին: «Ձը կան խօսքեր, որ կարելի լինէր
նկարագրել թէ ինչ աստիճանի է հասնում
աղքատութիւնը: Պատուում է սիրտդ, երբ
տեսնում ես այդքան տանջանքներ... Այսօր
դարձեալ բերին յիստ ընտանիք Պօլեֆ-
ստրոմից... Երեխաները լայն էին լինում քաղ-
ցածութիւնից, բայց մայրերը նրանց կերակ-
րելու բան չունէին: Բոլոր կանայք բերված
են ագարակներից: Եւ մարդ ուղարկեցի քա-
ղաք (Բօհանէսթրոմ), որ հաց առնեն, բայց
չէին կարողացել մի բան գտնել: Ձեք կարող
երեւակայել, թէ որքան դժուար է այստեղ
նոյն իսկ մեծ փողով ուտելիք գտնել: Գների
կանայք աւելի եւ աւելի շատ են բերվում:
Նրանց այժմ պահում են նեղերի համար
չինքն բանտերում: Անա եւ մի քաղաքած
այն նամակից, որ նոյն թղթակիցը ուղար-
կել է տան օրից յետոյ: «Հաւատե՛ք դեր կա-
նանցով լի գնացքը: Կանայք ճանապարհին
բաց վազօնների մէջ էին տեղաւորված: Ե-
րեք կանայք ճանապարհին ծնեցին երեխա-
ներ: Միայն այն ժամանակ, երբ գնացքը կա-
յարան հասաւ, նկատեցին որ ծնողականնե-
րից մէկը վախճանվել է նորածինի հետ: Տեղ
հասածները ուղարկվում էին սովից եւ
յոգնածութիւնից: Իսկ ահա ինչ է գրում
կանայքի պօրուչիկ Մօրիսոն, որ լրագրի
հրատարակիչ էլ է. «Մենք առաջ ենք գը-
նում, քչում տանում ենք տնային մեծ ու
փոքր անասուններին, ամեն ինչ ոչնչացնում
ենք կրակով, խում ենք ինչ կարելի է վերց-
նել եւ թողնում ենք կանանց ու երեխանե-
րին աւերակների մէջ: Այսպէս է կիսիների
երկաթէ ձեռքի առաջին հպարտման թողած

հետքը: Խոստովանում եմ, ես ամենեւին չէի
ցանկանայ մի անգամ էլ մասնակցել այսպիսի
արշաւանքի: Հրդեհները եւ կողոպուտները
վրդովում են մեզ, կանադացիներին: Մենք
այս պարարտ հովտում կրակեցինք վեց մղոն
լայնութիւն ունեցող մի չերտ եւ բոլորովին
գետնին հաւասարեցրինք: Վիպօրտ գիւղը եւ
Դուլստրոմ քաղաքը, Բոցի եւ ծովի սիւ-
ներն են մեր զօրաբանի անցած ճանապար-
հը ցոյց տալիս: Այժմ ծխացող աւերակները
չըղպատված էին այլիներով, որոնց կատ-
րեցին զինուորայինը... Ձինուորայինը սխա-
տաւոր վերցնում են ամեն ինչ իւրաքանչիւր
տանից: Մեր կանադացիները օգնում են կա-
նանց ազատելու կահ-կարասիքները: Երբ տես-
նում են մի որ եւ լաւ բան, որը կարելի
է առնել, նրանք, ի հարկէ, վերցնում են:
Բայց կանադացիները այնքան ամուր ջղեր
չունեն, ինչպէս զինուորայինը, որ վերցնեն
կերը նրանց տէրերի աչքի առջեւ: Դուք
պիտի տեսնէիք, թէ ինչպէս են «գործում»
թաղաւորական հրացանածիգները: Կահ-կա-
րասիքները դուրս են թողնում պատուհաննե-
րից, դաշնամուրները ջարդվում են կացին-
ներով եւ այլն: Մի կին, որի աչքերը այր-
վում էին յուզմունքից, կանչեց իմ երեսին.
«Ողորտակութիւն. ինչպէս էք դուք այդ-
պէս վարվում: Ես բայցատեղի նրան, թէ
մենք ստորից ենք պարզ հրահանգներ եւ
պարտաւոր ենք կատարել նրանց: Անուտ ա-
մենայնիւ, իմ սիրտը տանջանքներից կրծկ-
վում էր, երբ ես տեսնում էի ինչպէս է
կրակը ոչնչացնում մարդու տնակները, ինչ-
պէս զարկվում են եւ յետոյ բռնկվում պըտ-
ղատու ծառերը եւ վարելի թիւերը: Արտա-
տեղները այրում էին իմ աչքերը, երբ ես
տեսնում էի կանանց եւ երեխաների խմբեր,
որոնց գերի էին քշում դէպի բանակը:

Ինչ են սրտնք, եթէ ոչ քրիական արշա-
ւանքներ: Յիշում էք, ընթերցող, չորս-հինգ
տարի առաջ... Պէտք էր, որ տարբերութիւն
լինէր վայրերի ախրէթների եւ անգլիական
զօրքերի մէջ: Աւաղ, միայն անգլիացիներին
մեղադրեցի. իսկ գերմանական եւ ֆրանսիա-
կան զինուորները Ձինաստանում... Միակ միւ-
թարական այն է, որ Ձաքի փայա դարձած
կիսիներին զինուորայինի առաջ ոչնչացրել չէին,
որովք մարդկանք են անմոռելի: Բօքսերական
այրվող տների, գերի քշվող կանանց տէրերը
հերոսաբար կուռում են անգլիացիների դէմ,
հանդատութիւն չեն տալիս եւ համարեա հաս-
ցրել են յուսահատութեան...

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, յունվարի 21-ին, ժողովրդական
ներկայացումների հայ սէկցիան Աւստրիական
թատրոնում ներկայացրեց (երկրորդ անգամ
այս սէզոնում) «Ղարաբաղի Աստղաղէտ»
պատմական դրաման: Ինչպէս միշտ, այս ան-
գամ էլ բազմաթիւ հասարակութիւն են հա-
ւաքվել թատրոնի թէ ներքը եւ թէ դուրսը:
Տոմարի համար (10 եւ 5 կոպ.) կրկնակի եւ
երրակի գին էին առաջարկում, միմեանցից
առնելով: Որչափ միութարական է եւ ուրա-
խակ փերջին երեւոյթը, որ հասարակութիւնը
սկսում է սիրել մայրենի թատրոն, նոյնչափ էլ
հայ սէկցիան պարտաւոր է այդ սէրն ու յար-
գանքը ի շարք գործ չը դնել, ներկայացնելով
այդպիսի պիեսանք՝ առանց փոքր ի շատեւ
ջող դերակատարների եւ մանաւանդ արդ ու
զարդի: Միծաղելի է, ճշմարիտ, ենթադրելի, թէ
պատմական անցեալի մասին կարելի է գաղա-
փար կազմել դերակատարների անունները տա-
լով միայն եւ մասների արանքից նայելով գոր-
ծին: Ձէ կարելի Ղարաբաղի մէկիւրի պա-
լատը, այն էլ XVIII դարում, գերմանական
կօֆէշանտանի գեղարուեստով զարդարել, կամ
չիֆանչիքիների հրամանատարի վրանում փո-
խանակ օթոնների, եւրօպական աթոռներ դար-
ակ խօսք. լաւ բան է թատրոն սիրել, սա-
կայն առաւել լաւ է լուրջ վերաբերվիլ գործին:
Ի դէպ, հարկաւոր է թատրոն յաճախող հա-
սարակութեան միշտ կարգի հրաւիրել. նրանք
իրանց անտեղի սրախօտութիւններով, անվայել
գողգոթոցով շատ վնասում են ներկայացման
պատկարութեանը:

Տ. Ե.

Ստեփան եւ Գրիգոր Գրիտաֆօրեաններ, Շուշանի Յակոբեան Սուխանեանները
եւ Կատարինէ Գրիտաֆօրեան Դաւթեանց յայտնում են իրանց ազգականներին եւ ծա-
նօթներին, որ

ՎԱՍՎԱՌԷ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՍՈՒԼԻԱՆԵԱՆՑԻ

ԿԱԼԻՊՍԷ ՄԻՆԱՍԵԱՆ ՍՈՒԼԻԱՆԵԱՆՑԻ

մահվան տարեգրածի օրը Ջգրաչէնի ս. Աւետեաց եկեղեցում կը կատարվի հոգեհան-
գիստ, որ պէտք է տեղի ունենայ հինգշաբթի, փետրվարի 1-ին, առաւօտեան ժամի
11-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքահայ գաղթականների պատկառու-
թեան հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ Ժողովրդական թատրոն. Նամակ Բա-
ղուց. Նամակ Շուշանից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Սերբական թագաւոր Միլան.
Պրօֆէսոր Պէտէնկօֆէր. Արտաքին լուրեր.—
ՀՆՈՒՄԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԹԻՐԻՔԱՆԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԻ ՊՍԱԿԱՐՈՒ- ԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Գործնական կեանքի մէջ մի հարց է
ծաղել թիւրքահայ գաղթականների ա-
մուսնութեան վերաբերմամբ: Ինչպէս յայտ-
նի է, ներկայումս մեր երկրում կան մեծ
թիւով թիւրքահայ գաղթականներ, որոնք
չեն վերադարձել հայրենիք զանազան պատ-
ճառներով: Այդ գաղթականների շրջանում
ծաղում են ինամախօտութիւններ եւ հո-
գեւոր իշխանութեանը ներկայացվում են
պատկառութեան խնդրերներ:

Անգրիկական հայոց հոգեւոր իշխանու-
թիւնը մինչեւ այժմ, ստանալով պատկա-
ռութեան այդպիսի խնդրերներ, պահան-
ջում էր, որ տեղական հոգեւոր ատենանե-
րը վկայութիւն տան ամուսնացողների
մասին եւ վաւերացնեն, որ ամուսնութեան
համար արգելքներ չը կան: Վերջին ժա-
մանակներս այդպիսի վկայականներ ձեռք
բերելը շատ դժուարացել է, իսկ շատ
դէպքերում նոյն իսկ անկարելի է դարձել:
Մինչդեռ ամուսնանալ ցանկացողները բազ-
մաթիւ վկաներ են ներկայացնում երկու
կողմից էլ ապացուցանելու համար, որ
նրանք կարող են պատկել, որ նրանցից
ոչ ոք ամուսնացած չէ, որ արեւակցական
կապեր չը կան նրանց մէջ:

Ինչ անել:
Մեր հոգեւոր իշխանութիւնը դժուար
կացութեան մէջ էր գտնւում իրան, որովհետեւ
եղել էին նախորդ տարիներում խարա-
խութեան դէպքեր եւ ամուսնացել էին
անձինք, որոնք արդէն ամուսնացած էին:
Սակայն մի քանի խարախութիւնների
պատճառով արգելիլ պատկառութիւնը
բազմաթիւ մարդկանց համար յարուցա-
նում էր գործնական կեանքի մէջ մեծ
գիտահոգութիւններ:

Հանազան տեղերից բաժանանքը դիմել
են եւ դիմում են հոգեւոր բարձր իշխանու-
թեան խնդրելով թիւեւացնել պատկա-
ռութիւնը թոյլատրելու հրամանը եւ ար-
գելը չը դառնալ ամուսնութիւն կատարե-
լու, երբ կասկած չը կայ, որ ամուսնա-
ցողները օրինաւոր իրաւունք ունեն պատկ-
վելու:

Հոգեւոր իշխանութիւնը մի ելք է առ-
այժմ կարողացել գտնել, այն է՝ թոյլ
տալ պատկառութիւն, թողնելով ամբողջ
պատասխանատուութիւնը պատկող բաժա-
նայի վրա, որը պէտք է ժողովէ ստոյգ
տեղեկութիւններ եւ ըստ այնմ կատարէ
պատկը:

Մենք չենք կարծում, թէ հոգեւոր իշ-
խանութեան այդ թոյլատրութիւնը վատ
հետեւանքներ առաջ բերէ: Պատասխանա-
տու բաժանանքը գործ կը դնեն բոլոր

7—10

3—3

№ 27

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱԻԵՐԻՑ

Մեզ թւում է, որ կարողացանք ցոյց տալ, որ այսպիսի հայրենի ստուգողը միայն Աւլանը կարող է լինել: Հիմքը միմյայն այն բանայական գաղափարներն են, որ ժողովուրդը, ինչպէս ինքնին, ինչպէս իր իրաւունքները, ինչպէս իր իրաւունքները:

ՀԱՄԱՆԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տխուր անցեալը մի ուսանելի գաս էր հոգաբարձութեան համար, ուստի անդամներէր իր բարձրանալու աշխատում էր հարցը թրջելու խիտ անապիկէ ենթարկելուց յետոյ միայն վերջնական կարծիքը յայտնէի, որպէս զի ապագայում գործի անապիկոտիւնը չը ծանրացնէ նրա խիղճը. ապազէ էր ահա մշակուած խնդրի երբ անդամներէր մէկը «դրեց հարց ընդհանրապէս արհեստագործական դպրոցի կարեւորութեան մասին մեզ համար»: (այս խօսքերը քաղուած ենք հոգաբարձական մի օրագրութիւնից իսկ ես, ուշադրութեան արժեքով այդ հարցը խօսեցնելու ժամանակ փոփոխակի ընդմիջու մներս ասելի եւ հետեւեալով. դպրոցի այդքան ընկնելու պատճառներէր ամենապիտաւոր այն հանգամանքն է, որ նա ժողովուրդի իսկական կարիք մտնող չէ, այլապէս հասարակութեան իսկական պահանջներին քաւականութիւն տուող հիմնականութիւն իր 23 տարակա հասակում չէր կարող մտնելու անդամանքին իջնել, այն էլ Աստուծոյ

510015 101 01 0

«Արեւելք» լրագրին գրում են Սամսոն
ղեկոսմբերի 22-ից. «Սոսկալի դիպուածի
զոհ կերթայ տեղւոյս Ռուսոյ հիւպատոս
ասպետ Էթմոն տը Ֆոիշ, ամսոյս 20-ին չ
րեքլաքեթի օր: Պ. Էթմոն տը Ֆոիշ սովորո
թեան ունէր գրեթէ ամեն օր ձիով պտոյտն
ընելու դաշտերը, շատ անգամ իր սիրելի
ընթերցանութեան Աւստրոյ հիւպատոս պ. Լա
Գէփի հետ: Ինչպէս որ նոյն օրն ալ օդին դ
ղեցկութեան պատճառաւ, միասին պտոյս
կեկնէ ձիով: Երբ ժամը 9 կէսին (Ը. Թ.) Տե
րէնդ կոչուող ժողովուրդը հրումանդանին դ
գաթը, կը հասնին, ուրի էջարաւպայի ճամբ
կանցնի, արեւմտեան կողմը լեռ եւ արեւելե
կողմը միմեկ գահալէծ: Ըստ լատալի ծով լ
լալով յիշան, յանկարծ պ. տ. Ֆոիշի ձ

Դիտուելիքնների ակադեմիայի գրադարան
օտար լեզուներով հրատարակած գրքերի բա-
ժանմունքում այժմ աշխատում է մի յանձն-
ժողով, որի նպատակն է պարզել ակադեմիա-
լիսութեան մէջ քիչ ժամանակ առաջ պատ-
հած հրդեհի պատճառը եւ միջոցներ ձեռք ա-
նել՝ գրադարանը ապաքայտու հրդեհներից
զատ պահելու համար։ Նոյն յանձնաժողով
վրա պարտաւորուելին է դրված կարգի բեր-
գրադարանի ասիական բաժանմունքի ձե-
ռագիրները, որոնց թիւը մէկ միլիոն հատո-
ւորից եւ տետրակներից աւելի է եւ որոնք
բանջ մէջ պարտաւորուում են ամենաշարու-
նիւթ արեւադարձուութեան վերաբերումաբ-

Հրէաների վերաբերմամբ գոյութիւն ունեցող օրէնքների ընդհանուր վերաքննութիւն առաջ՝ որոշված է փոփոխութիւնների ենթա-

մէթ-
գա-
պէս...
ը կը
այդ
ընէ...
ըրդէն,
ըլլար,
մըմակ
եղած
կը մը
ուր-
սնմիկ
զըտ-
ան-
նը ու
ծ, ա-

կել հրէական բարեգործական հաստատութիւն-
ները, որոնց մեծամասնութիւնը կամ ոչ մի
կանոնադրութիւն չունի կամ գործում է վա-
ղուց հաստատութիւն եւ այժմ հնացած կանոնա-
դրութիւններով: Մտադրութիւն կայ պարտա-
ւորեցնել այդ բարեգործական հաստատու-
թիւնները մշակել եւ ներկայացնել ներքին
թիւնները միջնորդութեան հաստատութեանը
գործերը միջնորդութեան հաստատութեանը
նոր կանոնադրութիւն մի տարվայ ընթաց-
քում: Այն հաստատութիւնները, որոնք այդ
ժամանակամիջոցում չեն ներկայացնել նոր կա-
նոնադրութիւն առանց որ եւ է յարգելի պատ-
ճառի, կը համարվեն դադարած եւ նրանց
գրամատուցները, ինչպէս նաեւ գոյքերը կը
յանձնվեն ընդհանուր բարեգործական ընկերու-
թիւններին:

ՊԵՏԵՐՆՈՒԹՅՈՒՆԸ մեզ գրում են. «Ահա մօտ
մի տարի է, որ այստեղ է գտնվում Մեքսիկոյ
վարչապետ Տէր-Մովսիսեան, որ միջնորդում
է ժողովրդին իր խելացի քարոզներով: Ինչ-
պէս յայտնի է, Մեքսիկոյ վարչապետը եկել է
այստեղ մագիստրոսութեան գիտնական աստի-
ճան ստանալու համար: Եւ զիմիկ էր լուսա-
ւորութեան միջնորդին, որ իրան թող տան
քննութիւն տալու համալսարանի արեւե-
լեան լեզուների ֆակուլտետում. սակայն
միջնորդը իր իրաւունքից դուրս համարելով,
զիմիկ էր Բարձրագոյն թոյլտուութեան: Նոյն-
միջնորդը Բարձրագոյն հրամանը ստացվելով,
Մեքսիկոյ վարչապետը մագիստրանտի քննու-
թիւն տուեց շատ փայլուն կերպով, բայց չան-
ցած երկու ամիս՝ նորից ստացվեց Արեւելեան
ֆակուլտետի մի լրացուցիչ ծրագիր, որով
պահանջում են զինքն եւ սանսկիթ լեզուների
քննութիւն, որը այս օրերս մեծ աշխուժեւումը
տուեց Մեքսիկոյ վարչապետին: Այժմ գիտնական
վարչապետը պատրաստում է դիմելու արեւ-
մագիստրոսի աստիճանը ստանալուն:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Երէկ, յունվարի
24-ին, Զարչապետի գաւառակի Աղջաղաւ
գիւղացիների մէջը, Եփրատ Գրիգորեան անու-
նով, ներկայանալով քննիչին յայտնեց, որ ինքը
սպանել է իր կնոջը եւ 1½ տարեկան աղջ-
կան: Պատճառը, սպանողի ասելով, եղել է
կնոջ մի ինչ որ մարդու հետ սիրային յարա-
բերութիւն ունենալը: Նա կնոջը բռնելով սի-
րելու հետ կամենում է երկուսին էլ սպա-
նել, բայց սիրելանը փախելով ազատվում է,
իսկ ինքը կարողանում է սպանել միայն կնո-
ջը, եւ տեսնելով որ աղջիկը մօր համար շատ
է լաց լինում, նրան էլ է սպանում: Կնոջը
ճանաչողները, ընդհակառակը, ասում են, որ
կնոջը եղել է շատ համեստ, բայց մարդը եւ
սկեսուրը շարունակ նրան հայդելիս եւ միջ-
նչեւ անգամ ծեծելիս են եղել եւ այդ պատճա-
ռով կնոջ հօր եւ ամուսնու մէջ ծագած է ե-
ղել թշնամութիւն: Կարծում են, որ սկեսուրը,
հարսից ազատվելու համար, հաւատացրած կը
լինի իր որդուն, թէ հարսը ուրիշների հետ
սիրային յարաբերութիւն ունի եւ այդպիսով
որդու մէջ կասկած է ծնեցրած լինում եւ
զրգում այդ բանն անելու: Քննիչը յանցաւո-
րին ուղարկեց բանտ: Այսօր քննիչը եւ բժիշ-
կը գնացին սպանութեան տեղը քննութիւն
կատարելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐ ՄԻՒԱՆ

Հեռագիրը երէկ լուր բերեց, որ Սերբիայի
նախկին թագաւոր եւ այժմեան թագաւոր Ալեք-
սանդրի հայր Միլան վախճանվեց Վիեննայում:
Միլան I սերբիական թագաւորը, որ սկզբում
կառավարում էր երկիրը Միլան IV Օրբէնովիչ
անունով, իշխան Միլոշ Օրբէնովիչի ազգական
էր եւ մօր կողմից (Մարկա կատարվի) ծա-
ղուկ էր մօլդավական հարուստ ցեղի, ծնվեց
1854 թ.ին: Իշխան Միլանի III անգլաւակ
լինելով որդեգրեց նրան: Տաւր տարեկան նա
ուղարկվեց Պարիզ Լիւդովիկոս Մեծի լիցեոմ
ուսումնական: 1868 թ.ին Միլանի ի սպա-
նութիւնը ստիպեց Միլանին շտապել Բէլգրադ,
ուր նա անմիջապէս իշխան հրատարակեց,
ինամակալութիւն նշանակվելով: Չափահաս ճա-
նաչվելով 1872 թ.ին, նա թագաւորվեց, որից յե-
տոյ ճանաչարհորդութիւն կատարեց զէպի
Վիեննա, Պարիզ եւ Կ. Պոլս: 1875 թ.ին Մի-
լանը պատկանեց Նապոլեոն Կէլօի հետ:
Ինչպէս եւ նրա նախորդները, նա, հակառակ
Աւստրիայի կողմնակից Կարազօրգիւնիւնների,
հետեւում էր ուսումնական քաղաքականութեան:
Երբ 1875 թ.ին սկսվեց սլաւոնական շարժումը

Բալկանեան թերակղզում, Միլան սկզբում ա-
մենեւին չէր ցանկանում նպաստել նրան, բայց
չուտով, հասարակական կարծիքի ճնշման են-
թարկվելով, 1876 թ.ին յուլիսին պատերազմ
յայտարարեց թիւրքիային: Սկզբում նա ինքը
կանգնեց զօրքերի գլուխ, բայց պատերազմական
կատարեալ անընդունակութիւն ցոյց տալով,
օգոստոսի 12-ին վերադարձաւ Բէլգրադ եւ
զօրքերի հրամանատարութիւնը յանձնեց զենե-
րալ Չէրնեանովին: Գնենրալ Չերնեանով, մի
քանի լուրջ պարտութիւնների կրելով, Սեր-
բիայի պրէստիժը բարձրացնելու յուսով, Մի-
լանին սերբիական թագաւոր հրատարակեց,
բայց եւրոպական ոչ մի պետութիւն չը
ընդունեց այդ ակտը: Բերլինի դաշնագի-
րը վերջ դրեց Միլանի վառարական կա-
խուժին: Թիւրքիայից: 1870 թ.ականներին Սեր-
բիայում ծագում առան սօցիալիստական եւ
արմատական կուսակցութիւնները, որոնք կա-
ռավարութեան հակառակ դիրք բռնեցին: Ըս-
կովիցին մի շարք քաղաքական դատեր: Հասա-
րակութեան մէջ մեծ ձգտում էր նկատվում
սահմանափակում Միլանի իշխանութիւնը եւ
հաստատելու սահմանադրական իշխում, այն ինչ
Միլան ձգտում էր միապետական իշխանու-
թեան, խախտելով սահմանադրութիւնը, ընտ-
րութիւնների հետեւանքները կեղծելով եւ ճնշ-
չով գործելով սկուպչինայի վրա: Ազդեցու-
թեան նշանաւոր մասը վարչութեան գործերի
վրա նա թողնում էր իր յաճախ փոփոխվող սի-
րելիներին:

Բերլինի կոնգրէսից յետոյ Միլան ուսա-
սիրութիւնը թողեց եւ աւստրիաէր դարձաւ,
այնպէս որ 1881 թ.ին, Աւստրիային հաճոյա-
նալու համար, առանց որ եւ է հիմքի, պաշտօ-
րեական կերպ Ռուսաստանի կողմնակից միտո-
սոցիալ Միլանի ինչ: Նոյն թ.ին նա այցելեց
Վիեննա, Բերլին եւ Պետերբուրգ: Այդ ճանա-
պարհորդութեան հետեւանքն էր Սերբիան երկ-
րորդ անգամ թագաւորութիւն հրատարակելը
(1882 թ.), որը այս անգամ աշխուժեւումը
պատկան: Այնուամենայնիւ զօրութիւնները
աճում էր Միլանի արտաքին եւ ներքին քա-
ղաքականութեան, նրա շարժումները, միջնոր-
դիքի եւ հարկերը աւելացնելու դէմ, եւ
1883 թ.ին, վերջապէս, մի դաւադրութիւն
կազմվեց նրա դէմ, որը ճիւղաւորութիւններ
ունէր մարդը Սերբիայում: Լուրջ ապստամբու-
թիւն սկսվեց յանկարծ շատ տեղերում, մասնա-
ւանդ Զայարում: Ապստամբութեան գլխաւոր
պատճառն այն էր, որ, Միլանի անձնական պա-
հանջով, սկսեցին խել գիւղացիներից զէնքեր,
որոնք բաժանված էին նրանց թիւրքաց պատե-
րազմից առաջ: Ապստամբութիւնը ճնշվեց ա-
րիւնհեղութեամբ: Նրա պարագլուխները (Պա-
չիչ, Տօքօրովիչ, Տաուչանովիչ, Միլոշևիչ եւ
ուրիշները) մահվան պատժի դատապարտվեցին,
որը փոխարինվեց երկարատեւ բանտարկու-
թեամբ: Զայարեան ապստամբութիւնից մի
փոքր առաջ Երեւան Մարկովիչ, հրացանի բռնը
ված գնդապետի այրին, սպանութեան փորձ
արեց Միլանի կեանքի դէմ: Մի քանի ժամա-
նակից յետոյ Երեւան Մարկովիչ եւ նրա ընկե-
րուհի Երեւան Կնիշանին յանկարծամահ եղան
բանտում: Սպառնալից յայտարարվեց նրանց
անձնապահութեան մասին:

Միլան թագաւորը 1883 թ.ին գաղտնի դաշ-
նագիր կապեց Աւստրիայի հետ, որով պարտա-
ւորվեց առ միշտ հրաժարվել Բոսնիայից եւ
Հերցեգովինայից, որի փոխարէն Աւստրիան
պարտաւորվեց դիմադրել Կարազօրգիւնիւնների
խնդիրներին, երաշխաւորեց Սերբիայի սահ-
մանների անձնաւթնափոխութիւնը եւ գործունէու-
թեան ազատ ասպարէզ թողեց նրա համար
Բալկանեան թերակղզում ոչ-աւստրիական շըր-
ջաններում: Յենկելով այդ դաշնագրի վրա, Մի-
լան 1885 թ.ին պատերազմ սկսեց Բօլգարիայի
դէմ, պատերազմ բռնելով այն, որ իբր թէ Բօլ-
գարիան խախտել է քաղաքական հաւասա-
րակցութիւնը Բալկանեան թերակղզու վրա:
Սերբիայի անպատրաստութիւնը պատերազմի
համար, պատերազմի անժողովրդական լինելը
Միլանի անընդունակութեան եւ փոքրորդու-
թեան հետ միասին, որը սկզբում հեռագրով
օտու տեղեկութիւններ էր հաղորդում Բէլգրադ
իր տարած փառաւոր յաղթութիւնների մասին,
իսկ յետոյ, Սլիւնիցի մօտ կրած պարտութիւնը
Բօլգարիան յաղթական դարձրին: Այդ պատե-
րազմից յետոյ Միլանի գրութիւնը աւելի վա-
տացաւ: Կամենալով հաշտվել արմատական
ներքին հետ, նա ներումն չտրեց նրանց պա-
րագլուխներին եւ զանազան խոստումներով
աշխուժեց նրան իր կողմը դրաւ: Նրանցից
ամենատաղանդաւորին՝ Տօքօրովիչին, բայց
նա նրանց իշխանութիւն չը առեց, եւ նրա

վարչութիւնը նոյն բռնակալական բնաւորու-
թիւնն ունէր: Մի եւ նոյն ժամանակ նրա
երկպառակութիւնները իր կնոջ հետ, որոնք
մինչեւ այդ ժամանակ ըստ կարելոյն դադարե-
լին պահվում, մեծ խաղաղութիւն առաջ
բերին: Միլանը 1888 թ.ին աքսորեց նրան
Սերբիայից այն պատրուակով, թէ անհրաժեշտ
է իր որդուն դաստիարակել արտասահմանում,
եւ պահանջեց նրանից չը վերադառնալ Սեր-
բիա մինչեւ որդու չափահասութիւնը: Երբ
Նապոլի թագուհին հրաժարվեց դրանից, նա
բռնի կերպով խել կնոջից որդուն եւ սկսեց
սպանաբազան ստանալու համար յայտնի դատը:
Դրանից յետոյ, մի կերպ իր գրութիւնը
բարեփոխեց համար, նա նոր սահմանադրու-
թիւն հրատարակեց: Այնու ամենայնիւ 1889
թ.ին մարտի 5-ին, նա ստիպված էր հրաժար-
վել զանից յօդու իր անչափահաս Ալեքսանդր
որդու, որի վրա ինամակալներ նշանակեց
Րիտտիչին, Պրոտիչին եւ Բէլիմարկովիչին: Այդ
ժամանակից նա մեծ մասամբ ապրում էր Պա-
րիզում, Տակովա կոմսի անունով, բայց ժամա-
նակ առ ժամանակ գնում էր Բէլգրադ, յայտնի
կերպով ղեկավարելով որդուն եւ ինամակա-
լութիւնը: 1889 թ.ից յետոյ Միլանը ստա-
նում էր որդուց տարեկան 300,000 ֆրանկ
ռոճի, բայց աչքի առաջ ունենալով նրա շտա-
լութիւնը եւ թղթախաղի սէրը, այդ գումարը
չէր բաւականանում, եւ Միլան անդադար դի-
նում էր սերբիական կառավարութեանը դրա-
մական պահանջներով, սպանալով, հակառակ
դէպքում, Սերբիա վերադառնալ: 1892 թ.ին
սկուպչինայն տուեց նրան 1 միլիոն ֆրանկ,
որի համար Միլան ստորագրեց հրաժարական
ծնողական իրաւունքներից որդու վրա եւ սեր-
բիական հպատակութիւնից: Չը նայելով դրան,
նա շարունակում էր միջամտել սերբիական
քաղաքական գործերում, պետական երկու յե-
ղափոխութիւն, 1893 եւ 1894 թ.ներին, Ալեք-
սանդր թագաւորը կատարեց նրա ցուցմունք-
ներով, նոյնպէս եւ յաջորդ փոփոխութիւնները
միջնորդութեան կողմից: Չը 1893 թ.ին
Միլան հաշտվեց իր կնոջ հետ եւ հետեւեալ
տարին սինգը նրանց ապահարգանք ապօրինի
համարեց: 1894 թ.ին Միլանը, հակառակ ըն-
դունած պարտաւորութիւնների, վերադարձաւ
Սերբիա, եւ արեւ ժամանակից անդադար դնում
էր Սերբիայի իր ցանկութեամբ, թէպէտ գերա-
դասում էր արեւել Վիեննայում եւ Պարիզում:
Վերջերս հօր եւ որդու մէջ կրկին երկպառա-
կութիւններ սկսվեցին, այնպէս որ Միլան
ստիպված եղաւ բողոքովին հետանալ Սերբիայից,
մասնաւանդ որ նա դէմ էր իր որդու ամուսնու-
թեանը:

ՊՐՕՖԷՍՈՐ ՊԵՏԵՐՆՈՒՆԸ

Մակա Ժօզէֆ Փօն-Պետտէնկօֆեր, ժամանա-
կակից հռչակաւոր հիդրէնիտը, որի ողբերգա-
կան անձնապատկերութեան մասին անցեալ օրը
հաղորդեց հեռագիրը, ծնվեց 1818 թ.ին: 1843
թ.ին ստանալով բժշկականութեան դոկտորի
աստիճան, նա առժամանակ քիմիայով պա-
րակցեց Կայզերի ղեկավարութեամբ Միւնխէ-
նում, Շէէրերի—Վիլհելմ-Բոլցերիցում եւ վերջապէս
Լիբիխի—Հէսսէնում: 1845—47 թ.ներին նա բը-
ժշկականութեամբ զբաղվեց, իսկ 1847 թ.ին բժշ-
կական քիմիայի պրօֆէսոր հրաւիրվեց Միւն-
խէնի համալսարանը: Բայց դրանից նա 1850
թ.ից բաւարական թագաւորական ղեկաւոր
կառավարիչ էր: 1846 թ.ին Պետտէնկօֆեր
Միւնխէնի գիտութիւնների ակադէմիայի ան-
գամ ընտրվեց:

Պետտէնկօֆերի առաջին գիտնական աշխա-
տանքները վերաբերում են քիմիային եւ ղեկա-
ւորակցեց գործնական բնաւորութիւն ունեցող
հարցեր են չօլափում, օրինակ քիմիայէն գուտ
ուսի արտադրելու եղանակները եւ պլատինա
պարունակող նիւթերի մշակումը, անգլիական
եւ գերմանական ջրապղնդի կրի հետազոտումը,
լուսատու գազի ստանալը փայտից, մօզաիքական
էմալի պատրաստութիւնը: Այդ ժամանակամիջո-
ցին է վերաբերում եւ իւզաների պատկերների
նորոգութեան եղանակի գիտը:
Վառարան վառելու պայմանների վրա արած
հետազոտութիւնները Պետտէնկօֆերի ուշա-
դրութիւնը դարձրին հիդրէնայի (առողջապա-
հութեան) հարցերի վրա: Պետտէնկօֆեր հիդրէ-
նան զրեց փորձնական հողի վրա եւ նրա հար-
ցերի լուծման համար գործ դրեց ֆիզիկո-քի-
միական մեթոդները: Ահա դա է կազմում Պե-
տտէնկօֆերի մատուցած ղեկաւոր ծառայութիւն-
ներ: Նրա ճեւեղները համալսարանում առողջապա-
կեց Միւնխէնի համալսարանում առողջապա-
հութեան առաջին ամբիոնը, որը եւ յանձնվեց

նրան: Նա ունի բազմաթիւ գրուածքներ, որոնք
թարգմանված են զանազան լեզուներով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berliner Tageblatt» լրագրի Նիւ-Եօրկի
թղթակիցը ամենապատասաւոր տեղեկութիւն-
ներ է հաղորդում բօքսների այժմեան դու-
թեան մասին, քաղելով իր տեղեկութիւնները
Օրանսեան հանրապետութեան ամբիոնական
հիւպատոսարանից: Ընդհանուր հիւպատոս Պրո-
հաւատացնում է, թէ բօքսական զօրքը բազ-
կացած է այժմ 25,000 մարդուց, որոնցից
8000-ը անցել են Կապի գաղթականու-
թիւն: Անգլիական զօրքերը, ընդհակառակը,
կազմաւորված են. նրանց կորուստները անա-
գին են. զօրքի կէսը չը կայ այժմ. ունեւք
սպանվել են, միւսները վիրաւորված են, հի-
ւանդ կամ գերի են ընկել: Բօքսների թէ ուտե-
լիքի եւ թէ ռազմամիջոցի պաշարները ա-
ռատ են՝ չնորհիւ այն բանի, որ նրանք խել են
անգլիացիներից մեծ քանակութեամբ սայլա-
խմբեր: Դէվլետ մի շարքովայ ընթացքում քնեց
տարաւ 2,000 ձիեր, 100,000 գլուխ տաւար եւ
6,000 գերի: Անգլիան ստիպված կը լինի խա-
ղաղութիւն կապել, որպէս զի իր ֆինանսա-
կան աւելումն առաջին անգամ Պրետորիա քա-
ղաքը գտնվում է ամենասարսափելի սանիտա-
րական դրութեան մէջ: Տիֆը այնտեղ անհա-
մար զոհեր է տանում ոչ միայն անգլիական
զինուորներին, այլ եւ քաղաքացիներին: Պրե-
տորիայի չըվակայքը սատուած եղների, ձիերի
եւ էջերի մի հակապական գերեզմանատուն է:
Միայն նոյնմոքս ամի մէջ Պրետորիայից դուրս
են տարված 600-ից աւելի ձիեր եւ եղներ,
որոնք սատուել են քաղաքի փողոցներում: Բա-
ցի դրանից քաղաքի եւ չըվակայքի հողը վա-
րակված է այն մարդկային դիակներից, որոնք
թաղված են շատ քիչ խորութեամբ. եւ երբ
անձրեւը թափվում է հեղեղի նման այնպէս,
ինչպէս տարվայ այս եղանակին, առուններն ու
գետակները ծածկվում են եւրօպայիցների,
նեգրների եւ կենդանիների մարմինների մա-
սերով:

—Ինչպէս երեւում է, բրիտանական կառավա-
րութեանը վիճակված է դժուարութիւններ
կրել այս դարի սկզբում ոչ միայն Աֆրիկայի
հարաւում, այլ եւ Ամերիկայի հիւսիսում: Փեր-
մանական լրագիրների ստացած տեղեկութիւն-
ներով, Մօնթեպալում կազմվել է մի քաղաքա-
կան ընկերութիւն, որի նպատակն է աշխա-
տել ազատել երկիրը անգլիական գերիշխանու-
թիւնից եւ կազմակերպել բողոքովին ինքնու-
րոյն պետութիւն: «Կանադայի Միացեալ-Նա-
հանգներ» ամենում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

29 յունվարի

ՊԵՆԻՆ: Ռուս-չինական բանկը Պենինում
շարունակում է հաց եւ շոր բաժանել չեւաւոր
չինացիներին ուսաց Կայսրի կողմից: Ներկա-
յում բանկը ամեն օր բաժանում է ութը
զանազան կէտերում 18,000 բաժնից աւելի ե-
փած խաչի, իսկ անցեալ շաբաթից սկսած բա-
ժանում է նաեւ հուս բրինձ: Այն ընակիչների
թիւը, որ իւրաքանչիւր օր բաժնի են ստանում
այդ բրինձի, 15,000-ից աւելի է: Տաւ շորեր
բաժանված են արդէն 2,200 զոյգից աւելի:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ: Այժմ հաստատույէ իմացված
է, որ Կապաւաղտում եղել են ժանտախտից
հիւանդանալու 13 զէպերը, որոնցից երկուսը
վերջացել են մահով:

ԳՐԱՆԱԳԻՐ: Անկարգութիւնները կրկնվեցին:
Ամբողջ օրը ցոյց անողները չըլուծ էին քաղա-
քի փողոցներով եւ աղաղակում: «Կեցցէ աղա-
ստութիւնը», «Թող կորին եղուխները»: Նրանք
սկսեցին քարկոծել կաւուխների վանքը: Երբ,
ի պատասխան դրան, վանքից արձակեցին հը-
րացաններ, ժողովրդի յուզումները հասաւ ծայ-
րահեղութեան: Պրէֆէկտը բռնի մտաւ վան-
քը եւ հաստատույէ իմացաւ, որ երկու ժան-
դարմներ, որոնք գտնվում էին վանքում, հրա-
ցան էին արձակում: Ամբողջ այնուհետեւ փո-
ծեց յարձակումն գործել վանքի վրա, բայց
ժանդարմները ցրվեցին նրան:

ՄԱԴԻՐԻ: Ներքին գործերի միջնորդը յայ-
տարարեց, որ կառավարութիւնը վճռել է ա-
մեն կերպ ճնշել անկարգութիւնները: 600 ուսա-
նողներ բողոքեցին այն բանի դէմ, որ Աստուր-
ական իշխանուհու պատկաւորութեան առի-
թով նրանց արձակուրդ է տուած: Պատկա-
ւորութիւնը արտմութիւն առաջացրեց եւ ոչ
ուրախութիւն:

ՄԱԴԻՐԻ: Մի թղթակցի հետ ունեցած խօ-
սակցութեան ժամանակ, Սաղաստա ցաւ յայտ-
նեց այն անցեալի անթիւ, որոնք այժմ տեղի
են ունենում Սպանիայում:

ՎԱՆԵՍԻԱ: Այսօր կատարվեցին փողոցային
նոր ցոյցեր, որ ղեկավարվում էր պատգամա-

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27